



ՎԱՐԴԱՆ ՖԵՐԵՇԵԹՅԱՆ

Ծնվել է 1958 թվականի փետրվարի 12-ին, Երեւան քաղաքում: Ավարտել է Գայի անվան միջնակարգ դպրոցը, ընդունվել մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսորական բաժինը: Ունի բազում թարգմանություններ ռուսերենից եւ գրաբարից: Թարգմանություններից առանձին հրատարակվել է Գրիգոր Նարեկացու «Մեկնություն Երգ երգոցի Սողոմոնի» գիրքը: Ծուտով լույս կտեսնեն Միխայիլ Բախտինի «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» և Պավել Ֆլորենսկու «Իկոնոստաս» երկը, ինչպես նաեւ Նարեկացու «Ներբողներ եւ գանձեր» գիրքը:

2010 թվականին հրատարակել է «Աքլորական» ժողովածուն:

ԱՆՀԱՅՏ ԲԼՅՈՒՉ ՎԻԼՅԱՄ ՍԱՐԴՅԱՆԻ ՀԱՄԱՐ

Վիլյամ Սարդյանն առաջիններից մեկը եղավ, որ լինելով զարմանալիորեն բեղուն ու առատագիր, ասես շրջեց Էմիլ Զոլայի «Ոչ մի օր առանց տողի» անտանելիորեն անհողորդ ու հայտնի արտահայտությունը, եւ «Խիզախ պատանին թռչող ծոծածողի վրա», լավագույն ջազային իմպրովիզացիաները հիշեցնող պատմվածքից հետո, կարող էր ասել՝ «ոչ մի տող, առանց օրվա»: Առանց՝ այդ պարզեված օրվա կենդանի հոգու շարժման, թրթռի, վետվետումների, թիռթի բերկրանքի ու անհուն տրտմության:

Ոչ մի գրողի ստեղծագործություններում այնքան բլյուզ (ու նաեւ ջազ) չի հնչում, որքան Սարդյանի պատմվածքներում, եւ ոչ մի գրողի պարզունակությունը այնքան թվացյալ չէ, որքան հենց լավագույն բլյուզների խաբուսիկ միապաղաղությունը, որոնց ներքո ծաղկում է նախնական ու անկորնչելի սարսուռը:

Ինչպես ասում էր բլյուզային կիթառահար Ալբերտ Քոլինզը՝ «Պարզ երաժշտություն նվագելն ամենադժվարն է, իսկ բլյուզը՝ պարզ երաժշտություն է»: Նույնը կարելի է ասել Վիլյամ Սարդյանի գրականության մասին, որի աներեւակայելի պարզությունն ու անսքողությունը շատ հաճախ խրտնեցնում եւ վիրավորում են պատվանդանի վրա կանգնած՝ «բարձր» հոգեւոր արժեքներով ապրող մարդկանց, որոնց հայացքի առջեւ միշտ փռված է արժեքների սյունակավոր ու կանխորոշ ցանցը, որի մեջ ոչ մի «պատահական» ձուկ չի որսվում, եւ որոնց անհաղորդ են մնում գետի խորքում քլթքլթացող այն հնչյունները, որոնք ասես ստեղծվում են ինչ-որ այլ տարերքներից, եւ դա է հենց ջազի (ինչպես նաեւ բլյուզի) հարստությունը՝ «նոր հնչյունների ներառումը», որի մասին իր զրույցներից մեկում, ջազի, բլյուզի եւ սփիրիչուելսի մասին խոսելիս, եւ 20-րդ դարի մեծագույն կոմպոզիտորներից մեկի՝ Իգոր Ստրավինսկու սերն առ ջազը հիշատակելով, Բորիսեն ասում է՝ «Երբ ես ջազ եմ լսում, ինձ ամենից շատ գրավում է այն, որ ես լսում եմ ձայներ, որոնք չեն լսում ոչ մի այլ երաժշտության մեջ»:

Ահա այդ «նոր հնչյունների ներառումը» եւ միանգամայն նոր տոնայնությունը, որիմն ու ձայներանգն անվերջորեն առկա են Վ. Սարդյանի ստեղծագործություններում, եւ հատկապես պատմվածքներում ու էսսեներում, կամ որեւէ դասակարգման չտրվող յուրահատուկ հուշախոհագրություններում («Կյանքի եւ մահվան օրերը ու փախուստ դեպի լուսին», «Ահա եկավ, ահա գնաց ինքդ գիտես, թե ով», «Պատահական հանդիպումներ», «Մահազղներ», «Ծնունդներ» եւ այլն):

Եվ այն արմատախիլ արված եւ այլ հողերում ու քաղաքներում, երկնաքերների եւ անհաղորդ հայացքների տակ բուն դրած՝ օտար ու շփերթ քամիների

տակ բվվացող ծառերի անսահման կարոտն ու տխրությունը եւ երբեմն էլ տերեւների արանքում պահկտված արեւի խատուտիկ ջերմությունն ու բեկբեկուն եւ բերկրուն լույսը, որից տրտմությունն ավելի անսահման է դառնում:

Եվ ահա այս պատկերը ծավալվեց աչքերիս մեջ եւ դանդաղ վար հոսեց, երբ օրերից մի օր Բլայնդ Վիլի Ջոնսոնի բլյուզներից մեկի ներքո թարգմանում էի Վիլյամ Սարոյանի «Չիրատարակված գրողը, իր աղջիկն ու անձրեւը» փոքրիկ պատմվածքի առաջին պարբերությունը. «Անձրեւում է, այս ամիսների ընթացքում առաջին անգամ մեր փողոցի սալահատակը տրտում է իր ցուացրած տներով եւ ժամանակ առ ժամանակ լուսավորվում է անցնող մեքենայի լուսարձակով, որ տամուկ ու սուլող ձայնով ընթանում է փողոցն ի վեր: Նստած եմ մեր տան ճակատամասի սենյակում, իմ դուստր Ջոաննայի հետ: Երեք տարեկան փոքրիկ երեխա է նա, որ իր մոր մեծ աչքերն ունի եւ նույն անխռովությունը, եւ նա կանգնած պատուհանի մոտ դիտում է տրտմությունը: Սենյակում իր ներկայության եւ լռության պատճառով ես էլ մանկունակ զարմանքով նայում եմ աշխարհին, եւ ինձ թվում է, որ նրա իմաստությունը մարդկային միակ իմաստությունն է: Տեսնել, խորապես հուզվել կյանքի պատկերով եւ սակայն ոչինչ չասել: Երբ այսպես աղջկա կողքին նայում եւ չեմ խոսում, ինձ թվում է խոսքի մասին ավելին եմ ըմբռնում, քան երբեւէ ըմբռնել եմ: Այդուհանդերձ ինձ համար անկարելի է բառերով արտահայտել այն, ինչ որ կամենում եմ ասել: Ասես զգում եմ, որ Լռությունը ամեն ինչ է»:

Ահա դարձյալ սկսում ենք լսել գետի խորքում թավալվող ու վերովարող հոսանքների ավազն ու հծծյունները, իրենք իրենց ներսում ներհյուսվող ու խեղդվող ալիքների անտունիները, որոնցով այնքան լեցուն են Սարոյանի պատմվածքները:

Եվ մի պահ մտաբերվում է նրա «Գյուղացին» պատմվածքի՝ 1908-ին հեռավոր Ամերիկա ընկած դուլթիկցի Սարգսի մեն մի նախադասությունը, ով իր հայրենակցի հարցմանը. «- Իսկ Ամերիկան հավանո՞ւմ ես, սրտո՞վդ է, դուլթիկցի եղբայր...», պատասխանում է. «- Ի՞նչ իմանամ... գնա, արի, գնա արի... ու ծանոթ-անծանոթ մարդկանց հետ սինիներ շուռ տուր...»:

Եվ այդ մեն մի բառով կամ նախադասությամբ սովորական պատմությունը, ասքը, խոհագրությունը, «նաղլը» մտքի թռիչքով հրաշքի վերածելու եզակի շնորհը, որ դրսեւորվում է իր բազում պատմվածքներում («Այն օրը», «Այս եւ ամեն», «Հայն ու հայը», «Հայ մուկը», «Խնդուրը», «Յոթանասուն հազար ասորիները», «666-ը», «Խեղճուկրակ արաբը»՝ այս թվարկումը դեռ երկար կարելի է շարունակել) եւ հատկապես «Իմ անձը երկրի երեսին» չքնաղ պատմվածք - խոհագրության մեջ, որի, այսպես կոչված «գլխավոր հերոսը»՝ գրամեքենան է, եւ որի շուրջ էլ հենց դառնում են բոլոր արկածները, մտորումները, իրադարձությունները եւ մտքի զարմանահրաշ թռիչքներն ու բեկումները, որ իրենց անսպասելի անցումներով ու փոքր ինչ կոտրտված ու շեղ ռիթմերով հիշեցնում են բիբոպի լավագույն դաշնակահարներից մեկի՝ Թելոնիոս Մոնքի

փշաքաղեցնող «ճամփորդությունները դաշնամուրի շուրջ»:

Իր այս աննման երկի սկզբում Սարոյանն ասում է. «Ամենից դժվարը սկիզբն է, չէ՞ որ այնքան էլ դյուրին չէ լեզվից ընտրել հենց այն միակ պայծառ բառը, որը պիտի ապրի ընդմիշտ, եւ յուրաքանչյուրը տենչում է արտահայտել իրեն հենց այդ անհրաժեշտ ու միակ բառով: Բանաստեղծությունը, պատմվածքը, վեպը, էսսեն, երազի հանգույն, սոսկ բառ է այն լեզվից, որից դեռ չենք սովորել թարգմանել, գիշերվա այդ մունջ եւ անհատակ իմաստությունից, հավերժության այդ քերականությանն ու օրենքներիս չենթակա լեզվից»: Եվ այնուհետեւ շարունակելով իր մտորում-ճամփորդությունները կյանքի, մահվան, գրականության եւ իր գրողական հավատամքի շուրջ, եւ տպագրելով այդ ամենը այն գրամեքենայով, որ ծայրահեղ չքավորության մի պահի գրավ էր դրել եւ երկար ժամանակ չէր կարողանում գրել, քանի որ նա միշտ գրամեքենայով էր աշխատում՝ նվազելու համար իր դաշնամուրը, եւ ահա մի պահի զայրացած ասելով, թե ատում է աշխարհի բոլոր տեսակի մեքենաները, եւ հանկարծ մտաբերելով, որ առանց գրամեքենայի կորցրել էր իր ինքնության մի կարեւոր մասը, ասում է, որ չնայած ատում է ամենայն մեքենաները, բայց ահա կյանք չունի առանց գրամեքենայի, եւ ահա այստեղ իրեն ներհատուկ անսպասելի մտքի թռիչքով մեզ է ընծայում իր ամենախորիմաստ ու հանձարավոր ձեակերպումներից մեկը. «Ես չեմ կորցրել ինքս ինձ հակասելու իրավունքը»: Այս ձեակերպումն ինքին առանձին խոսակցության նյութ է, ու թերեւս ազատության ամենադիպուկ արտահայտություններից մեկը:

Բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց անբովանդակ դեմքերին խորիմաստության արտահայտուն-դիմակ հագնելու ճիգերից պարտասած բարբաջում են ազատության, ինքնության եւ մեր մենթալիտետի անսասանության մասին, վաղուց արդեն կորցրել են իրենք իրենց հակասելու իրավունքը, եւ դույզն ինչ չեն կասկածում, որ այդ իրավունքը գեթ մեկ անգամ կորցնելուց հետո այլեւս երբեք չես վերագտնի:

Յուրաքանչյուր մարդ կարող է այսօր մի բան սիրել, վաղը՝ այլ մի բան, կամ այսօր մի բան ընդունել, վաղը՝ չընդունել եթե դա բխում է իր ներաշխարհի խորքերի վայրիվերումներից, զանց առնելով պատեհապաշտությունը, հարմարվողականությունը, հողակիությունը որոնց մենք այսօր դեմ ենք առնում ամեն քայլափոխին, եւ եթե նա չի կորցրել ինքն իրեն հակասելու իրավունքը, որ մարդուն պարգեւված ամենամեծ շնորհներից մեկն է, եւ ինչը որ օրեցօր նվազում է:

Եվ եթե դու հավատում ես ինքդ քեզ հակասելու իրավունքին, ապա երբեք չես ավերի մարդու ամբողջականությունն ու լիությունը, որ քանիցս ավերել ու խաթարել են հենց մեր աչքի առաջ, եւ, որպես կանոն, հենց այն մարդիկ, ովքեր վաղուց ի վեր կորցրել են իրենք իրենց հակասելու իրավունքը, եւ հիմա, թողության համար պարբերաբար կաթոլիկ եկեղեցի հաճախող պոռնիկների նման, շառագունած այտերով ու հորթի աչքերով նայում են մեզ:

Այս մղձավանջի հաճախանքից ազատվելու եւ անտունիների ու բլյուզի թե-

մային վերադառնալու համար մտաբերվեց եւս մի դրվագ այս անսման՝ «Իմ անձը երկրի երեսին» կամ «Ես այս աշխարհի երեսին» պատմվածքից, երբ երեք տարեկանում հորը՝ այդ քիթլիսցի բանաստեղծին կորցրած Սարոյանը, նրա հետ կապված բոլոր պատմությունները վերհիշելով, եւ հայերեն գրված՝ իր խորքում ննջած եւ արդեն անհաս տառերին նայելով, եւ անգլերեն գրված օրագիրը թերթելով, ասում է. «Ըստ այդ օրագրի, եւ Նյու-Յորքում միայն երկու հոգեվիժակ ուներ՝ տխուր եւ շատ տխուր»: Այս «տխուր եւ շատ տխուր» – ը, որ իր խորքից եկող անտեսանելի ալիքներով փլում է փուչ լիության ու երջանկության որմերը, երբեմն հասնելով անտեսանելի բերկրանքի բարձունքներին, կարող է լինել մեր բոլոր տարագիր բանաստեղծների, նկարիչների, երգահանների, աստուծիների, ինչպես նաեւ աֆրոամերիկյան բլյուզի լավագույն բնութագիրը:

«Այն՝ ինչ ինձ չի սպանում, ինձ ավելի ուժեղ է դարձնում» – ասում է Նիցշեն, եւ սա երիցս ծձմարիտ է Սարոյանի պարագայում, ով ճաշակեց զրկանքի, որքության, մանկատան եւ դրսի բոլոր դառնությունները, երբեք ու երբեք չկորցնելով իր անկախ նկարագիրը, կորովն ու հանդգնությունը, եւ երբեւէ չխաթարելով ու չաղավաղելով իր միջի «ներքին մարդուն», եւ դա մի քաղաքում՝ Ֆրեզնոյում, ուր տարօրինակ ու անբնական հայատյացություն էր տիրում, ինչը նրա խորքում ավելի էր շեշտում իր հայ լինելն ու այլությունը՝ բոլոր մակարդակների վրա: Այն «տխուր եւ շատ տխուր»-ը, որ բուն էր դրել նրա հոգում, եւ անտեսանելի բերկրանքի բարձունքներին հասնելու կարողությունը, ասես սերում էր մեր անգիր բանահյուսության ու մեր էպոսի խորքերից, որ նրա խենթութեամբ ու ծռության կորիզն է, ինչն էլ հենց նրան առանձնացնում է բոլոր ամերիկահայ գրողներից, ավելի կոնկրետ լինելու համար, ասենք՝ Մայքլ Առլենից (Տիգրան Գույումջյանից): Ինքը՝ Սարոյանը, բազմիցս վկայել է իր այդ տարբերությունը, եւ մի անգամ իրեն ուղղված այն հարցմանը, թե ինչ կարծիքի է Մայքլ Առլենի մասին, պատասխանել է՝ «Անիկա կրավորական հայ է, ես՝ ներգործական»: Սա թերեւս ամենափայլուն ձեռագրապատկերից մեկն է: Եվ այստեղ արդեն բնավ էլ կապ չունի, թե դու որտեղ ես ծնվել կամ ուր ես ընկել, քանի որ ներգործական հայ լինելը շնորհ է եւ ոչ թե ստացվածք, որ կարող ես մսխել, ինչպես երկրիդ հարստություններն են մսխում այսօր բյուրավոր ստահակներ, որ ոչ հայ եւ ոչ էլ ընդհանրապես մարդ կոչվելու իրավունք չունենալով հանդերձ, հպարտությամբ ու թվացյալ անպատժելիությամբ կրում են իրենց կրավորական գոյությունը, չկասկածելով անգամ, որ դա էլ հենց ամենամեծ պատիժն ու նզովքն է, եւ այն, ինչ չի սպանում նրանց, առավել խղճուկ է դարձնում:

Ինչ վերաբերում է բլյուզին, որ ականա կարծես այս գրության լեյթմոտիվն է դառնում, նշենք Ալբերտ Մյուրեյի ամենանրբին դիտարկումներից մեկը. երբ խոսելով այն մասին, որ Ամերիկայում սեւամորթ ստրուկների շրջանում ինքնասպանության դեպքերն ավելի քիչ էին, քան ստրկատերերինը, ասում է՝ որովհետեւ նրանք բլյուզ էին երգում, եւ երբ կարոտից, խոնջանքից ու անսահման

Որովհետև բոլոր գաղթականները գալիս են Նյու-Յորք: Ինչո՞ւ ես պետք է բացառություն կազմեմ: Նաեւ ես գնում էի այնտեղ, որ գտնեմ իմ ոճը: Ավտոբուսային ողիսականը ինձ զգացնել տվեց երկրի թափը: Նյու-Յորքը ինձ զգացնել

տվեց մեծ քաղաքի թափը: Նույնպիսի կյանք էր ինչ-որ Ֆրեզնոյում, բայց Նյու-Յորքում լոյենքերին հանկարծ ձյուն եկավ:

Ես մեր ցրիչ Պիտեր Բոֆրերին ասացի.

– Ա՛յ սա ո՞ճ է, իսկական ո՞ճ, այս ձյունը՝ ամենակատարյալ ո՞ճն է, նման բան ես երբեք չեմ տեսել, եւ եթե ես երբեւէ սովորեմ գրել այնպես, ինչպես այս ձյունն է տեղում, ապա ես կհասնեմ թե փառքի եւ թե հարստության»:

Եվ թեպետ վերջում ասում է, թե ինքն այդպես էլ չկարողացավ ըմբռնել այդ տեղացող ձյան գաղտնիքը, բայց քսանվեց տարեկանում լույս տեսած «Խիզախ պատանին թռչող ճոճածողի վրա» առաջին իսկ ժողովածուն, որ երեսունվեց պատմվածք էր պարունակում, որ գրել էր մեկ ամսում, լոյենքերին տեղացած ձյան պես զարմանալի անակնկալ եղավ, եւ մեկեն Նրան հայտնի դարձրեց ողջ աշխարհում:

Ճիշտ այդ լոյենքերին տեղացած ձյան պես զարմանալի անակնկալ էր ինձ համար, երբ տասնինը թե քսան տարեկանում Երեւան քաղաքում, կեսգիշերին, փոքր ինչ գիտովցած, մանրամաղ անձրեւի տակ զբոսնելիս եւ հրապարակի մոտով անցնելիս, տեսա հյուրանոցի երկրորդ հարկում փափախը գլխին, իր տխուր եւ շատ տխուր հայացքը հեռու մի կետի հառած Վիլյամ Սարոյանին եւ ականալից մեխվեցի տեղում, մինչեւ որ Նա հանկարծ ինձ նկատելով ժպտաց, ձեռքը պարզեց ու վեր ելնելու նշան արեց: Թե ինչ էինք խոսում եւ առավել եւս լռում՝ լավ չեմ հիշում, գուցե անակնկալն ու հիացմունքը խանգարեցին, բայց ահա մի պահի ձեռքը ծոցագրպանը տարավ, հանեց Նոթատետրն ու դատարկ մի էջի վրա բացելով հարցրեց.

– Էհ, տատիդ սիրած խոսք կամ զրույց ո՞րն էր.

– Ամենամեծ մեղքը սուտ դարդն է.– ասացի:

– Էհ, կհասկնամ, Լյուսի Ղարոջլանյան մեծ մայրս ալ երբեմն ատանկ տխուր, աղվոր ու ահագին բաներ կըսեր:

Հետո գրիչը հանեց եւ Նոթատետրի դատարկ էջի վրա դանդաղ ու անզլերեն տառերով գրի առավ տատիս խոսքը: Եվ տարօրինակ էր, տատիս ձայնը լսելով, տեսնել Նրա խոսքը Սարոյանի գրչի տակ՝ անզլերեն տառերով ու հայերեն բառերով:

Իսկ հետո, երբ դուրս եկա, անձրեւը սաստկացել էր, եւ մեկեն թրջվելուց հետո, արդեն դանդաղ սկսեցի քայլել մթին ծառուղիներից մեկով:

Եվ հիմա, ամեն անգամ, այդ մեն միակ «պատահական հանդիպումը» վեր-հիշելիս, եւ առավել եւս Նրա գրքերն ընթերցելիս, մեջս հնչում է մի անհայտ բլյուզ Վիլյամ Սարոյանի համար:

ԸՆԴՀԱՏՎԱԾ ՄԵՂԵԴԻՆ

(Կոմիտաս)

Կույրը

Տեր իմ,

Սեր իմ.

Զարկին քաջքեր՝

Կուրացուցին իմ աչքեր:

Լույս տուր,

Հույս տուր.

Ասա նայե,

Իմ աչքերուն խնայե:

Կոմիտաս

Բոլոր ընդհատված մեղեդիներն ունեն անորսալի ու անկասելի մի ընթացք եւ շարունակություն, որոնց հասու չենք լինի, քանի դեռ մեր ունկը խուլ, իսկ աչքը գոց է այն աներեւոյթ տատանումների առաջ, որոնցից էլ հենց ծնվում են՝ ձայնը, տառը, բառը, պատկերը՝ գողթան երգերից մինչեւ ձայնքաղ շարականներն ու ժողովրդական երգերը, բանարվեստն ու մանրանկարները, մենապարերն ու խմբապարերը, հրաշապատում հեքիաթները, աղոթքները, հայրեններն ու անտունիները, «Մեկնություն քերականացը»՝ բառի եւ լռության ձույլ հնչականությունը, ավանդույթը եւ դրա խզումը, որն էլ հենց փրկում է ձախճացումից եւ ապահովում ու ծավալում է դրա մշտահոլով անընդհատականությունն ու Փոխակերպության տոնը:

Եթե մենք երբեւէ հասկանանք, թե որքան սևասկ ենք, եւ թե միաժամանակ ինչ անպատում հարստություններ ենք կրում մեր խորքում, ապա երկուսն էլ կլինի Կոմիտասի շնորհիվ, եւ կամ ավելի ճիշտ՝ Կոմիտասի օրինակով, ով լինելով «աչքի պես պարզ ու բարդ», երբեք տեսողությունը չի զատել տեսունակությունից, կամ էլ լսողությունն ամենամուկ ու խայտուն բաներն ունկնդրելու ջանքից, եւ կամ թե վանքի ներսում խտացող երգեցողությունն ու մեղեդին, վանքի պատերից անդին, տապանաքարերի վրա ալիքվող աննշար-բազմերանգ ծավալվող ծաղկանց նմանվող ժողովրդական երգերից ու պարեղանակներից՝ տխրամած ու ծիծաղկուն, անդորրավետ եւ հոխորտուն, պարզ ու մշտահմա:

Երբ ահա Գոշավանքի նրբահյուս խաչքարից աչքը կտրելով հայացքդ սահեցնում ես վիմափոր արձանագրությունների վրայով, բիրդ հանկարծ բախվում է, ասես մի անհայտ թռչնի ճանկերով արված այս վիմագրությանը. «Ահա եղեւ պայծառ գարուն, եկին ծիծեռունք, ի սեր եւ ի ուրախութիւն կենցաղասեր

Կոմիտաս
ՀԱՅԿԱՆԿԱՆ
ՄԱՍԻ

մարդոց»: Հետո մի ակնթարթ կենտրոնանում ես կենցաղասեր բառի վրա, որ կյանք բառի հոմանիշն էր մի ժամանակ, երբ Մաշտոցը գրում էր.

Ծով կենցաղոյս հասապագ զիս ւլեկօծէ,
Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ,
Նավապետ բարի լեր անձին իմոյ ապավէն:

Եվ ակամա մի պահ սրտնեղում ու սարսում ես բառի ու մեր վարքի թավազլոր անկումից:

Սիրտս նման է էն փլած տներ,
Կոտրին գերաններ, խախտեր են սուներ:

Այնուհետև անձրեւի կաթիլներից ու հանկարծ ճայթող որոտմունքից շեղվելով հայացքդ հառում ես անշարժ-սեւեռուն հեռաստանների ու կուտակ-կուտակ ամպերին, եւ, ասես բնականաբար լարված անշարժություն ու սպասումը հայացքիդ ուժով լցնելու համար, հեռվում մի հոտաղի ես նշմարում, որ եզներով հողը վարելով հորովել է երգում, եւ ընդհատված մեղեդին, ասես երկինք միտվելով, ամպերը պատռելով վարար անձրեւ է բերում, տեղատարափից հետո արեւի շողերն ընկնում են դամբանաքարերի վրա հանգչած խոնջ ու գլխահակ ծաղիկների վրա, որ անվերջորեն, գորշությունից խույս տալով, բազմերանգ խայտալով տապանաքարերը վերածում են քամու տակ թրթռացող գորգերի:

Եվ գեղեցկության ու անհուն տրտմության այս մշտարժարժ պսակադրությունը, որ ասես սերում է Կոմիտասի երգերից, եւ կամ հակառակը՝ փոյթ չէ, քանզի միմյանցով են ամբողջանում:

Ընդհատված մեղեդին իրականում երբեք չի ավարտվում:

Վերջերս, չեմ հիշում ում կատարմամբ, լսում էի Կոմիտասի Նոտագրած դաշնամուրային փոքրիկ գործերը, որոնք իրենց պարզության, թափանցիկության ու ժամանակային առումով թիռթեւ լինելու պատճառով, չգիտես ինչու հանկարծ հիշեցրին Անտոն Վեբերնի այն գործերը, որոնց մասին Ադորնոն ասում էր, որ դրանք ունկնդրին լռության հետ միայնակ են թողնում ավելի վաղ, քան նա կհասցնի ընդհանրապես ինչ-որ բան ընկալել: Իր աֆորիստիկ ֆակտուրայի եւ Նոսր հյուսվածքի պատճառով այդ երաժշտությունը հրաժարվում է ունկնդրին ուղեկցելուց կոնկրետ զգայական ու լայնածավալ համատեքստերի ծիրերում եւ անվերջորեն դեպի Ներս ուղղված կատարյալ աննշմարությամբ ու առանձինությամբ (բայց ոչ զատվածությամբ), մի պահ զարմանալիորեն ու տարակերպ շարունակում է բոլորիս մեջ ընդհատված մեղեդին:

Ի վերջո բոլորիս մեջ ննջած ու ընդհատված մեղեդին շարունակում է միմիայն այն սարսուռը, որից էլ հենց ծնվել է այն, եւ ինչի առաջ շատ հաճախ մեր զգայարանները՝ աչքերն ու ականջները փակ են՝ քանզի մենք ահա օտար ենք ինքներս մեզ, եւ ուրեմն՝ այլոց:

Օտարամուլը չի կարող ինքն իրենից օտարվել եւ սիրել իր բացակայությամբ:

յունը, քանի որ ինքը չկա: Եվ ինքնությունը կորցրած որեւէ մարդ չի կարող իր ներսում եւ իրենից դուրս որեւէ բան սիրել: Եվ հենց դա է օտարամոլությունը՝ ինքդ քեզ եւ ուրիշին սիրելու անկարողությունը:

Այս տողերը գրելիս, հիշեցի մի գրականագետի, ով, մեղադրելով ինձ օտարամոլության մեջ, ասում էր. «Մենք այնքան անսպառ արժեքներ ունենք, ինչ ես ընկել այդ Զոյսերի, Պրուստների, Ակուտագավաների ետեւից»:

Այն ժամանակ ես նրան ոչինչ չասացի, իսկ հիմա հիշելիս ասում եմ. «Որովհետեւ ես Կոմիտաս ունեմ»:

Մտաբերեցի նաեւ մի երաժշտի, ով իրենից գոհ ու զարմանալով այս ժողովրդի տգիտության վրա՝ ասում էր. «Ես այդպես էլ չհասկացա, թե որն է Կոմիտասի մեծությունը, եւ թե ինչպես կարելի է նրան դնել Բախի, Բեթհովենի կամ ասենք Բարտոկի, Յանաչեկի կողքին»:

Մենք մեր բանականության բթացած շեղքով անվերջորեն, անձրեւաորդի պես, երկատելով Արեւելքն ու Արեւմուտքը, իմն ու օտարին, հոգեւորն ու աշխարհիկը, ավանդույթն ու դրա խզումը, ակնթարթն ու հավերժությունը, չենք տեսնում, որ ամենայն երկատված բաների մեջ ուրվառկախ է այն անտես գիծը, որ այդ ամենը միավորում է:

չենց դա էր, որ հանձարեղորեն կռահում ու տեսնում էր Կոմիտասը, որ, իր մեջ միաժամանակ կրելով ավանդույթը, ավանդույթի խզումը եւ խզման ավանդույթը, կարողացավ անել համարյա թե անկարելին՝ այնչափ տեսանելի ու շոշափելի դարձնել այն բոլոր բաները, որոնց առջեւ մենք երբեմն կուրանում ենք՝ ինչպես Մարտիրոս Սարյանի որոշ կտավների կամ արեւի լույսի հանդիման:

Նրանք, ովքեր կարծում են, թե այս ամենը անհավանական է եւ կամ թե վերջ ունի, թող հիշեն Մնձուրու խոսքերը. «Տրամաբանությունը կանգ կառնե»:

Նրանք, ովքեր կարծում են, թե այս ամենը այսօր է սկսվել, վկայաբերելով մեր այժմյան ուժացումն ու ինքնուրացումը, եւ մոռանալով հայացքի, դիմադրության ու ընդհատված մեղեդու ուժի մասին, եւ ագռավի պես կռավածայն ազդարարելով, թե մեղեդին վերջնականապես ընդհատվել է, թող հիշեն նաեւ, որ մի ակնթարթ տեւող սարսուռն ավելին է, քան նույնիսկ ողջ դար ձգվող ուժացումը, եւ թող կարդան Խորենացու «Ողբը» եւ կամ թե հենց Կոմիտասի «Ազգին վիժակը» վերնագրված այս վերջին գրություններից մեկը, որ կամենում ենք մեջբերել ամբողջությամբ.

«Հոտն անհովիւ՝ մոլոր ու շփոթ, աներեւոյթ եւ անզուսպ ալիքներ յախտոն կը յուզին ի խորս մեր հալածական եւ ողբալի կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղա, բուժիչ ուժ չկայ: Ավերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մէկ կողմէն, անտարբերութիւն, օտարամոլութիւն ու ցեխոտ սրտեր միւս կողմէն: Փառասիրութիւն, փութկոտութիւն մէկ երեսէն, ապիկարութիւն, տգիտութիւն միւս երեսէն: Իւրաքանչիւր ոք իր պաշտոնն զգեցած է իբր հանդերձ, յոր մերկութիւն մտաց ծածկի ի

միամիտ աչաց: Մեր մարմինը նեխած է եւ մեր հոգին ապականած, մեր կեանքը դիակնացած: Ո՞ր է մեր խոհական Խորենացին, թող ելլէ արիւնաքամ հողու տակէն եւ ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց պաշտոնին փարած էին անձնահեղձութեամբ, իսկ մենք կը յափշտակենք գործն՝ ընչաքղցութեամբ:

Սիրտս փլած է»:

Սա արդէն բոլորովին այլ մի անտունի է՝ ներքին տարագրության պատմությունը, բայց որից ծնվել են՝ «Շողեր ջան», «Չինար ես, կեռասալ մի», «Արորն ու տատրակը», «Հով արեք» եւ բյուրավոր այլ տխուր ու պայծառ երգերը, ինչպես նաեւ մանկական կայտռուն ու վետվետուն խմբերգերն ու պարեղանակները:

Այդպես դառնակորիզի վրա գոյանում, արկվում եւ հասունանում է քաղցր ու արեւահամ ծիրանը:

Կոմիտասը կատարելապես տիրապետում էր կապարը ոսկու վերածելու ակքիմիական թաքնարվեստին, որին հասու չեն ոչ միագիծ երջանկության ու փուչ լիության ջատագովները, եւ ոչ էլ ունայնաձայն ու լալահառաչ վայնասուն բարձրացողները, որոնք խլացնում են այն սրբազան ողբանվագը, որից բերկրանք է ծնվում, ինչը մշտապես առկա է «Մատյանում» եւ կամ թե ասենք մեր անգիր բանահյուսության եւ միջնադարյան տաղերգության եւ նույնիսկ եղերերգության մեջ:

Բոլորիս մեջ ընդհատված մեղեդին այժմ շատ հաճախ խրտնում ու փախչում է մեզանից, անվերջորեն փնտրելով իր շարունակությունը, եւ գտնելով՝ հույժ երբեմնակի, քանի որ մենք անվերջորեն կորցնում ենք այն լսելու եւ առավել եւս կատարելու կամ վերապրելու սարսուռը, կորցնում ենք մեր ձայնի աղավաատումը, ուրկից անտեսանելի վեր են խոյանում հազարաթե թռչունները, որոնց մենք չենք տեսնում ու չենք լսում, քանզի մեր աչքերն ու ականջները պաշարել ենք անկենդան շենքերով, անբովանդակ դեմքերով, ունայնամիտ գրքերով ու ենիչերիական մորեխապարսեր հիշեցնող ամենակույ ու գորշ երգերով:

Այս ամենի մեջ միակ մխիթարական բանը եղել ու մնալու է այն, որ չնայած տգետների եւ ուրացողների հոծ բազմաքանակությանը՝ նրանք քիչ են, քանի որ միակերպ են, միանման ու միադեմ, իսկ հանձարները, քանքարավորներն ու շնորհալիները, չնայած իրենց նվազաքանակությանը՝ միշտ շատ են, քանի որ աննման են: Եւ նրանք համեմատելի չեն, ինչպես անհամեմատելի են՝ կենցաղն ու կյանքը, կապարն ու ոսկին, «բանհիւս կանայք լալականք» եւ Գրիգոր Մագիստրոսի՝ դամբանախոյզ ծիածանումը ներբողող, ողբի գերեզմանական պարը, եւ կամ ինչպես Լորկայի հիշատակած «Դուենդեն» (Տնապայը կամ Տան ոգին) ու դրա բացակայությունը:

Եվ այդու, մի Կոմիտասը մշտապես ավելին արժե, քան բյուր հազարավոր ձայնուրաց աղաղակողների բանակը, որ թեպետ երբեմն կատաղած ոչխարի

հոտի պես առյուծ է պատառոտում, բայց, ըստ էության, բնույթը չի փոխում:

Երբ վերջերս Լորիցնոր ընթերցում էի Լորկայի «Դուենդե» թեմա այլացումներով» խոհագրությունը, դարձյալ մեջս հնչեց Կոմիտասը, որպես Լորկայի հիշատակած դուենդեյի կատարելատիպ:

Դուենդեն այն գաղտնի ուժն է, «որը ոչ ոք չի կարող բացատրել, բայց յուրաքանչյուրը կարող է զգալ»: Դուենդեն ունակ չէ կրկնվելու, այն միշտ անկրկնելի է, ինչպես մրրկյալ ծովը: Դուենդեն հենց այն սարսուռն ու կրակն է, առանց որի ոչինչ չի ծնվում:

Վերոնշյալ խոհագրության մեջ Լորկան պատմում է Ֆրանսիայից եկած մի իսպանուհի հանրահայտ երգչուհու մասին, ով ահա մտնում է պանդոկներից մեկը, ուր նստած խմում են կանտե-խոնդոյի ու ֆլամենկայի վարպետները: Եվ ահա նա, հոգու խորքում ըմբռնվելով նրանց հիացքը, հրաշաձայն մի արիա է երգում, բայց երբ ավարտում է, պանդոկում մեռելաձայն լռություն է տիրում: Եվ ծեր վարպետներից մեկը շրջվում ու ասում է «Երգածիդ մեջ դուենդե չկա»: Զայրացած երգչուհին արագ մոտենում է նրանց սեղանին, մնացած խմիչքը պոկեպոռնիկ լցնում է ծեր վարպետի գավաթն ու քաշում գլուխը եւ այրված, խռպոտ ու արեաքոսոր ձայնով սկսում է կանտե-խոնդո երգել: Եվ ամենքը միասին վեր են թռչում ու բացականչում՝ օլե, որովհետեւ զգում են դուենդեն: Պատկերացնում են, թե ինչ կկատարվեր նրանց հետ, եթե ինչ-որ հրաշքով նրանք լսեին Կոմիտասի երգերից մեկը՝ իր իսկ կատարմամբ:

Ես հիշում եմ փետրվարյան այն ցուրտ ու մառախլապատ վաղեմի ծննդյան օրերից մեկը, երբ մայրս ինձ մի փոքրիկ ու հաստ ձայնասկավառակ նվիրեց, որի վրա ձայնագրված էին Կոմիտասի երգերը՝ հենց իր կատարմամբ: Եվ երբ հյուրերը գնացին, բացեցի սենյակի անկյունում դրված հին գերմանական ռադիոընդունիչի կափարիչը, հանեցի ձայնասկավառակն ու զգույշ տեղադրեցի կոպիտ ու սուր ասեղով նվագարկչի վրա ու սկսեցի լսել, մեջս զարթնեց այն անբացատրելի սարսուռը, դուենդեն, տնապայը, ներքին ուժը, որ համակում է քեզ, երբ ասենք առաջին անգամ տեսնում ես Հռիփսիմեի տաճարը, Նորավանքը կամ Մոմիկի խաչքարը, եւ կամ ասենք, երբ առաջին անգամ կարդում ես Միսաք Մեծարենցի պոեզիան, ում յուրաքանչյուր տողը բանաստեղծություն է:

Օրինակները կարելի է անվերջորեն շարունակել, սակայն դա չէ կարելու, այլ այն, որ Կոմիտասի շնորհիվ եւ կամ թե օգնությամբ ես հանկարծ տեսա այդ ամենը միավորող անտեսանելի հյուսկենը, այն աներեւույթ շղթան, որ այդ ամենը կապում է միմյանց: Եվ հասկացա նաեւ, որ եթե դու քո ներսում Կոմիտաս չունես, ուրեմն չունես նաեւ Նարեկացու «Հավուն, հավունը» եւ Ծնորհալու «Առավոտ լուսոն», չունես բանաստեղծություն՝ գողթան երգերից մինչեւ այսօր, չունես նկարչություն, ծարտարապետություն, գիր, չունես լեզու, որի երաժշտությունը եթե չես լսում, ուրեմն մեղեդին ընդհատվել է քո մեջ: Սակայն եթե մեղեդին ընդհատվում է մեկի կամ թեկուզ բյուրավորների մեջ, ապա երբեք

իսպառ չի վերանում եւ չի կարող ընդհանրապէս անհետանալ, քանի դեռ այն ապրում է, թեկուզ եւ ոչ բյուրոց մեջ եւ կամ՝ շատ քչերի:

Ինչպէս վկայում է Լորկան՝ դուենդեն հնարավոր է ցանկացած արվեստում, սակայն, իհարկե, այն իրեն ավելի արձակ է զգում երաժշտության, պարի եւ ասացողների բանաստեղծության մեջ, որոնց անհրաժեշտ է իրականանալ կենդանի մարդկային մարմնում, քանզի դրանք հավերժորեն ծնվում ու մահանում են, իսկ ապրում են ակնթարթաբար... եւ ընդմիջտ:

Կոմիտասի ձայնագրությունները լսելուց մի քանի ամիս անց, մի օր հայրս տուն բերեց Կոմիտասի սանի՝ Արմենակ Շահմուրադյանի ձայնապնակը, եւ ես օրերով լսում էի այն՝ զգալով այդ երգերի կատարման մեջ դուենդեյի՝ այդ անտեսանելի եւ աներեւոյթ ուժի յուրատիպ այլացումը: Նա, Շահմուրի նկատած, ընդոժին բնականությամբ, շինականի իր շեշտն էր տալիս երգին, իր անգերազանցելի բուրմունքն ու գունագեղումը: Առանց Կոմիտասի անկարելի էր այդ հրաշագործությունը: Եվ նրա շնորհիվ մեջս զարթնեց այն անբացատրելի սարսուռը, որը ոչնչի հետ չես համեմատի ու չես փոխի:

Տարիներ անց, երբ արդեն դեռահաս էի, մի օր տարեց բարեկամներիցս մեկի հետ հայտնվեցի նկարիչ Մարտին Պետրոսյանի արվեստանոցում, եւ երբ նայում էի նրա նկարները, մեջքիս կողմից լսեցի «Արորն ու տատրակը».

Արորն ասաց տատրակ հավքուն.

ինչո՞ւ կուլաս կուց-կուց արուն:

Երբ շրջվեցի՝ տեսա անկյունում փոքրիկ աթոռի վրա նստած, գլուխը հակած, աչքերը գոց ու անմոռաց ու վերացած երգող նկարչին, որ կարծես կար ու չկար: Երգն ավարտելուց ու փոքր-ինչ դադար առնելուց հետո, նա սկսեց երգել «Հով արեքը».

Հով արեք սարեր ջան, հով արեք,

իմ դարդին դարման արեք:

Կոմիտասի ու Արմենակ Շահմուրադյանի կատարումներից հետո, դա այդ օրերին իմ լսած լավագույն կատարումներից մեկն էր, որ մի պահ աչքիս առաջ ուրվագծեց արծաթավուն վերապաց բարդիներով այն նեղլիկ, չեչաքարե ձանապարհը, որով ձեռքս բռնած Երանուհի տատս ինձ տանում էր եկեղեցի, ուր գավթում մոմերը վառելուց հետո, տատս ու ընկերուհիներն սկսում էին իրենց աղոթք-մրմունջը, որ լեզվիս տակ դրված նշխարի հետ լցվում էր մեջս, եւ նրանց շարժվող շուրթերի արանքում կար այն այնտես գիծը, որ այս ու այն աշխարհները շաղկապում էր միմյանց, ծնելով այն սարսուռը, որ այնքան նման էր Կոմիտասի երգերին:

Եվ ես հասկացա, որ ընդհատված մեղեդին անվերջորեն ունի իր աներեւոյթ ու անկասելի վերադարձն ու շարունակությունը: